ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. դեկտեմբերի 13-ից 15-ը Թբիլիսի (Վրաստան)՝ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Իրինա Ղափլանյանի գործուղման վերաբերյալ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**

   Իրինա Ղափլանյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**

   Բնապահպանության նախարարի առաջին տեղակալ

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ</u>**

   Թբիլիսի (Վրաստան)
   2018թ. դեկտեմբերի 13-ից 15-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**

   Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն (REC)

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**

6. Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի ղեկավար խորհրդի հանդիպում:

7. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ</u>**

   Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնն (ԿՏԲԿ) իրականացնում է մի շարք ծրագրեր, որոնց շնորհիվ հնարավոր կլինի հասնելու շրջակա միջավայրի աղտոտվածության ծավալների նվազեցման, արտադրական և տեխնոլոգիական կարիքների ծախսերի կրճատման, աշխատանքի արդյունավետության բարձրացման, ապրանքների որակի, ինչպես նաև արտադրության պայմանների, ընկերության կարգավիճակի և հասարակական կարծիքի բարելավման:

   Հանդիպման ընթացքում քննարկվեցին Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (REC) 2017-2018թթ. գործողությունների ծրագիրն, ինչպես նաև ազգային, տարածաշրջանային ծրագրերը:

Քննարկվեց նաև Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի համագործակցությունը դոնորների ու միջազգային կազմակերպությունների հետ:

Հանդիպման ընթացքում ներկայացվել է ղեկավար մարմնի զեկույցը, որը հաստատվել է Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (REC) տնօրենների կողմից:

Հանդիպման ընթացքում քննարվեցին հետևյալ կարևորագույն հարցերը.

- Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (ԿՏԲԿ) ամենամյա ծրագրի գործունեության վերանայումը,
- Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (ԿՏԲԿ) ֆինանսական վիճակը,
- Քննարկումներ և աուդիտորական հաշվետվության հաստատում,
- 2019 թվականի աշխատանքային ծրագրի ներկայացում,
- 2019 թվականի գործառնական բյուջեի ներակայացում,
- Ներկայացված փաստաթղթերի քննարկումները և հաստատումը,
- 2019-2025թթ. Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (ԿՏԲԿ) տարածաշրջանային մարտահրավերների նախագծի ներկայացում:

Խորհդի անդամները, որի կազմում է նաև եվրոմիության ներկայացուցիչը և երեք երկրների խորհրդի անդամները, հաստատեցին իրենց նշանակումները և գրանցվեցին Վրաստանի համապատասխան ռեգիստրում:

Հանդիպման ընթացքում քննարկվել են երեք պետությունների կողմից Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (ԿՏԲԿ) հետ ավելի սերտ համագործակցության հարցերը, որը կարող է իրականացվել տարբեր ոլորտային ծրագրերի միջոցով:

8. <u>ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</u>

Հանդիպման ընթացքում ներկայացվեց Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (ԿՏԲԿ) գործունեության ֆինանսական

զեկույցը, քննարկվեցին ընդհանուր աուդիտի հարցերը: Աուդիտի վերջնական զեկույցը կներկայացվի 2019թ.-ին:

Քննարկվել և ընդունվել են Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոնի (ԿՏԲԿ) ռազմավարության փոփոխությունները և ռազմավարական փաստաթղթերը:

ԿՏԲԿ-ի արաքելությունն է աջակցել Հայաստանին Կովկասի երկրներում բնապահպանական խնդիրների լուծմանը, ստեղծել քաղաքացիական հասարակություն, ներգրավել բնակչությանը որոշումների կայացման գործընթացում, ապահովել տեղեկատվության ազատ փոխանակում, աջակցություն ցուցաբերել ազգային և տարածաշրջանային հասարակական կազմակերպությունների, կառավարման համակարգի, բնակչության, ինչպես նաև այլ շահագրգիռ կողմերի միջև համագործակցությանը:

Բնապահպանության
նախարարի առաջին տեղակալ՝

12/18/2018

X

Irina Ghaplanyan
First Deputy Minister of Nature Protection o...
Signed by: GHAPLANYAN IRINA 7709830366

Իրինա Ղափլանյան